



N 21-03
03.02.2021

ՀՀ արդարադատության նախարար՝
պարոն Ռուստամ Բաղասյանին

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Բաղասյան,

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամները ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ հանդիպել են հացադուլի մեջ գտնվող Գոռ Մանուչարյանին: Վերջինիս պնդմամբ հացադուլը կապված էր իր քրեական գործի հետ: Հացադուլավորի խցի պատերի ծեփը տեղ-տեղ թափված էր, օդը հեղձուցիչ էր, սենյակի միակ լուսամուտը չէր բացվում, ըստ ազատագրկվածի՝ այն կոտրվել էր երբ ինքը փորձել էր օդափոխության նպատակով բացել լուսամուտը: Ըստ ՔԿՀ պետի՝ լուսամուտը կոտրել էր Գ.Մանուչարյանը, որի վերաբերյալ կազմվել է արձանագրություն: Գ.Մանուչարյանը Խմբի անդամներին հայտնել է նաև, որ իր ոտքը կոտրված է, ինքնուրույն չի կարողանում տեղաշարժվել, իրեն շշուկ ջուր են փոխանցում հսկիչները: Մենյակում առկա էր ընդամենը 1 մահճակալ, որն է այլ կահույք չկար՝ սեղան, աթոռ, պահարան և այլն, իր իրերը այդ թվում՝ դեղահաբերը և հագուստը դրված էին գետնին (տես՝ կից ներկայացվող լուսանկարները): ՀՀ կառավարության 3 օգոստոսի 2006 թվականի N 1543-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի 46-րդ կետի համաձայն՝ կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի խուցն առնվազն պետք է ապահովված լինի սեղանով, նստարանով կամ աթոռով, հագուստի կախիչներով, կենցաղային իրերի պահարանով, ռադիոընդունիչով և աղբամանով: Խցերում սարքավորվում են սանհանգույց և լվացարան՝ խմելու ջրի ծորակով:

Վերոգրյալի հիման վրա, առաջարկում ենք կազմակերպել Գ.Մանուչարյանի խցի լուսամուտի վերանորոգումը և սենյակը կահավորել լրացուցիչ անհրաժեշտ գույքով՝ համաձայն ՀՀ կառավարության հիշատակված որոշման:

Հարգանքով՝

Խմբի նախագահ

Արայիկ Զայան